

ERM0548



18

# ՃԵՍԻԿԱ

ԼՈՆՏՈՆԱԲՆԱԿ ԱՂՋԻԿ ՄԸ

ԻՐԱԿՈՆ ՊՈՏՈՒԹԻՒՆ




Cesika  
Daniel Ghannam



ՍԵԼԱՄԵԹ ՏԱՐԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՐՈՒԹՈՒԹՅՈՒՆ

1934



ՃԵՍԻԳԱ

ԼՈՆՏՈՆԱԲՆԱԿ ԱՂՋԻԿ ՄԸ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



548

ՍԷԼԱՄԷԹ ՏՈԱՐԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1934





# Ճ Ե Ս Ի Գ Ա.

## ԼՈՆՏՈՆԱԲՆԱԿ ԱՂՋԻԿ ՄԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԻՒՆ)



### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՐՃԱՐԱՆ ԵՒ ՍՐՃԱՐԱՆԻՆ ՏԵՐԸ

Պարկեշտ և իր գործին հոգածու անձ մը որուն  
անունն ու բնակութեան տեղը անծանօթ էին, վասն զի  
քիչ անդամ յարաբերութիւն ունէր ուրիշներու հետ,  
սրճարան մը բացած էր կոնտոնի փողոցներէն մէկուն  
մէջ ուր բարձր կամուրջ մը կայ:

Զմեռուան մէջ առտու մը սրճարանին գուռը եկաւ  
աղքատ աղջիկ մը, բայց յիշեալ անձը շատ զբաղած  
ըլլալով ուշադրութիւն չըրաւ անոր: Աղջիկը կը նա-  
յէր սուրճին և շօթերուն (փիտէ) որ շարուած էին սըր-  
ճարանին մէջ: Զգեստները հին և պատուած էին,  
աչքերը սեւ ու պայծառ, և երկայն ու խիտ մազերը  
խառն ի խուռն կ'իջնէին ուսերուն վրայ, Պղտիկ աղ-  
ջիկ մըն էր ան և նէնար, և որովհետեւ բոկոտն էր  
կ'երեւար թէ շատ կը մոէր, ուստի և ոտքերուն եր-  
բեմն մէկը և երբեմն միւսը վեր առնելով միւսին վրայ  
կը դնէր: Սուրճին և շօթերուն նայեցաւ այնչափ, որ  
աչքերն անօթի անասուններուն աչքերուն պէս փայլիլ  
սկսան: Երեսէն ալ յայտնի էր անօթութիւնը: Յետոյ  
աւելի մօտ գնաց՝ սուրճին անոյշ հոտն աւելի մօտէն  
առնելու համար: Այն ատեն սրճարանին տէրը տեսաւ  
զայն, բայց գուրս չըրաւ, դարձեալ իր գործով զբա-  
զեցաւ. իսկ աղջիկն աչքը շօթերուն տնկած՝ շրթունքը  
կը լզէր:

Սրճարանին տէրը սովոր էր, առտուան յաճախորդներուն մեկնելէն ետքը, շուտով ամանները ժողվել և խանութը գոցելով տուն երթալ։ Այս անգամ ալ, երբ յաճախորդները մեկնեցան, սկսաւ երթալու պատրաստուիլ, և այն միջոցին աղջկան ըսաւ մեղմ ձայնով. «Դուն ալ երթալու ես, շատ կեցար հոս, շուտ ըրէ, գնա :» Աղջիկը պատասխանեց, «Շատ աղէկ, տէր, բայց սաստիկ կ'անձրեւէ, և մայրս մեր տան գուռը կղպած և բանալին առած է։ Հոս կենալով սուրճին անոյշ հոտն առնել ինձի շատ ախորժելի է, մանաւանդ որ սստիկանը հոս չի նեղեր զիս և շատ հանգիստ կը զգամ. դիտե՞՞ս՝ ինչո՞ւ սստիկանը զիս չի հալածեր հոս, վասն զի յաճախորդ կը կարծէ զիս :» Այս ըսաւ, և սկսաւ ծիծաղիլ, որպէս թէ կատակ ըրաւ։ «Կ'երեւի թէ :» ըսաւ սրճարանին տէրը, «դեռ բան մը կերած չես :» «Այնպէս է :» ըսան աղջիկը, «ո՞ւր պիտի գտնեմ ուտելիք։ Դեռ բան մը կերած չեմ, և անօթի պիտի մնամ, մինչեւ որ կէսօրուան ճաշի համար ուտելու բան մը գտնեմ։ Դուն փորձած չես, չես գիտեր անօթութիւնն ի՞նչ է :» Այս ըսաւ և գլուխը երեցնելով մեկնեցաւ. բայց հազիւ տասը քայլ ճամբայ առած էր, սրճարանին տէրը կանչեց զայն։ Աղջիկը ետ դառնալով՝ երբ եկաւ, սրճարանին տէրը նշանացի հասկցուց որ վառարանին քով նստարանին վրայ նստի, և ըսաւ. «Առ այժմ հոգ նստէ, և սա հացի կտորուանքը կեր, քիչ մըն ալ սուրճ տամ, խմէ, բայց ուրիշ անգամ հոս մի գար։ լսեցի՞ր ինչ ըսի, ետ մուրացկանի ողորմութիւն տալու սովորութիւն չունիմ, և դուն եթէ մուրալու եկած ըլլայիր, հաւատա՛ որ իսկոյն սստիկանով դուրս կը հանէի քեզ. ի՞նչպէս, հիմա կրակին քով հանգչեցա՞ր :»

Աղջիկը, որուն բերանը լեցուն էր ուտելիքով, չկրցաւ բան մը ըսել, այլ քաղցրութեամբ նայեցաւ

սրճարանին տէրոջ երեսը։ Սրճարանին տէրը դարձեալ պարապեցաւ իր գործին, սակայն ատեն ատեն աղջկան նայելով կ'երերցնէր զլուխը։

Քիչ մը ետքը ըսաւ աղջկան, «Անունդ ի՞նչ է,» բայց իսկոյն, որպէս թէ զզջալով այն հարցումն ընելուն համար, ըսաւ. «Փողոցները թափառող տղոց անունը գիտնալ ինծի ի՞նչ պէտք է։» Սակայն աղջիկը չնայելով անոր այս խօսքին, ըսաւ. «Անունս ձէսիգա է, բայց ուրիշներ ձէս կ'ըսեն ինծի։ Եթէ դուն ըլլայիր ձէս, կեանքէդ չէի՞ր ձանձրանար։ Ամէն մարդ կ'ըսէ, 'ձէս, սա ըրէ, սա զործը սապէս ըրէ։' Առտուընէ մինչև իրիկուն ասոր անոր զործին ետեւէն կը վազեմ։ 'ձէս, ձէս,' կ'ըսեն. 'տար սա բանն այնինչ տեղը, այնինչ տունը,' իսկ վարձքս՝ դաւազան կամ ապտակ է։» «Հոս նայէ, տես սա.» ըսելով, թեւը վեր առաւ և տեղ մը ցուցուց օր կաս կարմիր եղած էր։ Սրճարանին տէրը կարեկցելով՝ դարձեալ գլուխը երերցուց։ Աղջիկը շարունակելով «Երանի թէ կարող ըլլայի,» ըսաւ, «միշտ հոս կենալ. սակայն դուն ահա կը մեկնիս, և չես ուզեր որ ուրիշ անգամ հոս գամ, այնպէս չէ։» «Այս,» պատասխանեց սրճարանին տէրը, «հոս գալու չես. սակայն քեզի բան մը ըսեմ, եթէ խօսք կուտաս շաբաթ մը չդալ, յառաջիկայ շաբթու այս օրս կրնաս գալ, բայց մէկ անգամ միայն. հիմա ե՛լ, գնա՛։» «Եատ աղէկ, տէր իմ,» ըսաւ ձէսիգա, «ահա կ'երթամ. միայն եթէ գործ մը կայ ընելու, հրաման ըրէ, կատարեմ։» Երբ հարցուց, «Կրնամ ամանները տունդ տանիլ,» սրճարանին տէրը պատասխանեց. «Ոչ, ոչ, հիմա գնա, և նայէ որ մինչեւ շաբաթ մը չերեւաս։» ձէսիգա, «Եատ աղէկ, շատ աղէկ,» ըսելով մեկնեցաւ։ Քիչ մը ետքը սրճարանին տէրը դուցեց խանութը և իր բնակարանը գնաց։





## ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՄԳՎԱՅԻ ՓՈՐՁՈՒԹՅԻՆԸ

Սրճարանին տէրը կ'ուզէր և կը սպասէր ամէն առաւօտ աղջկան նիհար և դեղնած դէմքը տեսնել։ Բայց աղջիկը, հաւատարիմ մնալով իր խոստման, ամբողջ շաբաթ մը չերեւցաւ։ Եւ երբ շաբաթը լրացաւ, առառու մը դարձեալ գնաց լուս և հանդարտ կեցաւ խանութին առջև, ու կը նայէր սուրճին և չօթերուն։ Այս անգամ դէմքն աւելի աւրուած էր, և հանդերձն աւելի մաշած, և ցուրտէն սաստիկ կը դողար։

Երբ յաճախորդները ցրուեցան, սրճարանին տէրը նշան ընելով ներս կանչեց, և աղջիկը ներս մտնելով իր առաջուան տեղը նստաւ, և իրեն տրուած սուրճով կերաւ նախընթաց օրուրնէ մնացած հացերը։ Յետոյ այս բարերար մարդուն երեսը նայելով՝ հարցուց։ «Անունդ ի՞նչ է։» — «Մկրտութեան անունս Դանիէլ է,» ըստ սրճարանին տէրը։


— Տէր իմ Դանիէլ, ուր կը բնակիք։

— Բաւական է, բաւական է, քեզի ի՞նչ որ իմ բնակարանս կը հարցնես, ես քու տեղդ հարցնեցի։

— Մի դժուարիք, տէր իմ, ուզեցի գիտնալ թէ ձեզի պէս բարերար անձ մը ուր կը բնակի։ Դուք բարի, շատ բարի մարդ էք, այնպէս չէ։

— Զեմ դիտեր, թերեւս շատ բարի չեմ։

— Քաւ լիցի։ բարի էք, աղէկ սուրճ կ'եփէք, ձեր չօթերն ալ շատ աղէկ են։ ես ձեզ կը դիտէի շատ անգամ, բայց դուք զիս չէիք տեսներ։ Այս, այս, գիտեմ որ բարի մարդ էք։ Դանիէլ կ'ուզէր իր գործով զբաղի, բայց կը խորհէր նաեւ թէ ի՞նչ կը նշանակէին աղջկան այս գովեստները, և թէ իրաւ բարի էր ինք։ «Աղէկ սուրճ կ'եփիմ,» կ'ըսէր մտքէն, «ոստիկանը



զիս նեղելու պատճառ չի գտներ, ասո՞նք ձշմարիտ են. բայց իրաւ բարի՝ մարդ եմ,» Այս խորհելով սկսաւ ստակները համրել, և հառաջեց, առանց պատասխանելու ձէսիգայի:

Քանի մը բողէ ետքը դիտմամբ մանր ստակ մը ձգեց գետինը, և որպէս թէ չիմացաւ, դարձեալ զբաղեցաւ իր զործով, դիտելով թէ ի՞նչ պիտի ընէր աղջիկը:

Ճէսիգա կեցաւ, իրը թէ չտեսաւ ինկած ստակը, և խօսելու պահուն կամաց մը ոտքը երկնցնելով դրաւ ստակին վրայ, և շարունակեց խօսքը:

Դանիէլի սիրտը նեղուեցաւ որ, իր այնչափ բարիք ընելուն հակառակ, աղջիկը կը ջանար ստակը գողնալ, և փոխանակ գթալու՝ խորհեցաւ յանդիմանել և խանութէն գուրս ընել զայն: Մինչ այսպէս կը խորհէր, ճէսիգա կարմրած և արտասուալից. Դանիէլի երեսը նայեցաւ, և ծոելով ստակն առաւ գետնէն, և սրբելով տէրոջը տուաւ:

Դանիէլ ծուռ ծուռ նայելով անոր, «Ի՞նչ է այս, որիկէ՝ առիր,» բուաւ, «Այս ստակը ձեզմէ ինկաւ,» պատասխանեց ճէսիգա, «և զուք չտեսաք:» Դանիէլ սաստելով բուաւ. «Ճէսիգա, չիտակ բոէ, պիտի առնէիք ստակը:» «Ճէր իմ,» ըստու աղջիկը լալով, «կեանքիս մէջ անդամ մը միայն ստակ անցաւ ձեռքս: Այդ ստակը ոտքիս մօտ ինկաւ, և երբ զուն չէիր նայեր, ոտքովս ծածկեցի, Բայց յիշելով որ զուն միշտ ինձի բարիք կ'ընես թոյլ տալով որ ներս մտնեմ և տաքնամ, սուրճ տալով խմելու, և այլն, զզջացի ստակը պահելուս վրայ, և ահա քեզի յանձնեցի, Բայց հիմա գուն ալ պիտի զուրս ընես զիս, և ա՛լ պիտի չթողուս հոս գալ . . . :»

Դանիէլ, դարձեալ իր գործին պարապելով, բաւական ժամանակ պատասխան չտուաւ. և ճէսիգա



կայնած կը դողար և կը խորհէր թէ սրճարանը հանդիստ տեղ էր, գուրսը ոչ սուրձին քաղցր հոտը կար, ոչ ուտելու հաց, և ոչ հոգացող մը, այլ միայն ցուրտ հոլ և հալածում։ Մինչ այսպէս կը խորհէր և կը կարծէր թէ Դանիէլ պիտի վռնտէր զինք, Դանիէլ քաղցրութեամբ ըսաւ, «Ճէսիգա, թերեւս եթէ ես քուտեղդ ըլլայի, չէի ըներ ինչ որ դուն ըրիր. դարձեալ, եթէ կ'ուղես, ամէն շաբթու այս օրս հոս եկուր, քեզի սուրձ և հաց կուտամ»։ Ճէսիգա անոր այս խօսքը տարբեր միտքով առաւ, որպէս թէ ըսել ուղէր, «Եթէ քուտեղդ ըլլայի, ստակը գողնալ չէի խորհեր»։ Եւ թէպէտ հրաման առաւ նորէն գալու, տրտմութեամբ գնաց։ Բայց Դանիէլ ըսել կ'ուղէր, «Եթէ ես քեզի պէս աղքատ ըլլայի, ստակը ետ չէի տար»։ Աղջկան մեկնելէն ետքը, Դանիէլ երկար ժամանակ կեցաւ և կրկնեց, «Եթէ ես ըլլայի, այնպէս չէի ըներ»։



### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՃԵՍԻԳԱ. ԳԱԿԱՆԵՒՆԵ ԿԲ ՏԵՍՆԵ ՈՒԹԵՇ ԿԵՐՊԱՐԱՆՔՈՎ.

Այս զէպքէն ետքը ճէսիգա դարձեալ շաբաթն անգամ մը կու գար։ Դանիէլի հացն ու սուրձը կ'առնէր, երբեմն նաև քիչ մը գործ կ'ընէր, սակայն Դանիէլ չէր ուղեր անոր թոյլ տալ որ բան հարցնէ, և չէր ուղեր սորվեցնել իր տանը ձամբան։ Բայց որովհետեւ ճէսիգա ամէնուն կ'ըսէր իր բնակութեան տեղը, փնտուղը կրնար գիւրաւ գտնել անոր տունը։ Ճէսիգա կը բնակէր գէշ թաղ մը, ախոռի մը վրայ, ուր սանդուղով մը կ'ելլուէր և ուր քիչ մը յարդէ զատ ուրիշ բան չիկար։ Առաջ անոր մայրը քանի մը կարասի տունէր, ինչպէս աման, վերմակ, բայց շատոնց օղիտուած էր զանոնք։ Այս կինն այնպէս չար էր որ, եթէ

Հնար ըլլար, աղջիկն անգամ կը ծախէր օղիի համար։ Բայց ձէսիգա, մօրը բեռ չըլլալու համար, մուրալով կամ դրացիներու տունը ծառայութիւն ընելով դժուարաւ կը հանէր իր հացը, և յաճախ մօրմէն և դրացիներէն ծեծ կ'ուտէր ու նախատինք կը լսէր։

Ճէսիգայի Դանիէլի հետ առաջին անգամ տեսնուելէն երեք ամիս ետքը, որ մը մայրը գինով տուն կուզայ ու անխնայ կը ծեծէ աղջիկը։ Աղջիկը կը փախչի և լալով փողոցին մէջ պարտելու պահուն կը տեսնէ Դանիէլը, որ սովորական ձեէն տարբեր հագուած կ'երթար առջևէն, ճէսիգա չհամարձակեցաւ ձայն տալ Դանիէլի, բայց անոր ետեէն զնաց։ Եւ երբ Դանիէլ ձեռքի բանալիովը բացաւ մեծ դուռ մը և ներս մտաւ, ան ալ քիչ մը ետքը մտաւ այն զոնէն, և տեսաւ ընդարձակ եկեղեցի մը, ամէն կողմ՝ վայելչօրէն զարդարուած, գետինը ծածկուած ծանրագին գորգով, չորս կողմը բազմոցներ շարուած որ մետաքսէ և թաւիչէ ծածկոցներով և բարձերով զարդարուած էին. մէկ կողմը կար զարդարուն բեմ մը, և բեմին ետե երգեհոն մը, իսկ մէջտեղն ու պատերուն վրայ կանթեղներ կախուած էին։

Դանիէլ, այս կանթեղները վառելու զբաղելով, չտեսաւ աղջիկը, Բայց մինչ ճէսիգա հիացմամբ կը նայէր չորս գին, Դանիէլ դիպուածով՝ անոր քով եկաւ, և ապշած մնաց երբ տեսաւ որ մուրացկան աղջիկը որու սուրճ տուած էր՝ հին հանդերձներով հոն եկած էր։ «Աղջիկ, այս ի՞նչ է.» ըսաւ, «ել զնա ասկէ, այս տեղ քեզի համար չէ. մաքուր հագուած տիկիններ և հարուստ մարդիկ միայն կու դան հոս, շուտով ել, զնա։ Բայց ի՞նչպէս եղաւ որ հոս եկար։» Դանիէլ եկեղեցւոյն սպասաւորներէն էր, և որպէս զի ուրիշ մը չլսէր իր խօսքերը, դած ձայնով կը խօսէր։ Ճէսիգա ըսաւ, «Կը ներէք, կ'աղաչեմ, մայրս զիս ծեծեց, և ես փո-

զոց փախայ, ուր ձեղ տեսնելով, վաղեցի ձեր ետևէն և հոս եկայ, և ահա ձեր հրամանին համաձայն կը թողում կ'երթամ: Սակայն ի՞նչ գեղեցիկ տեղ է այս, տիկիններ և պարոններ հոս ինչու կու գան, հաճեցէք ըսել, և անմիջապէս կ'երթամ:»

«Հոս ազօթք կ'ընեն, և ըսաւ Դանիէլ:

— Ազօթքն ի՞նչ է, հարցուց աղջիկը:

— Ազօթքն ի՞նչ է չե՞ս զիտեր, ժողովուրդը մէկտեղ կու գայ, ումանք ծունը կը դնեն, ուրիշներ նստած կը խոնարհեցնեն իրենց զլուխը, պաշտօնեան բեմէն ժողովուրդին փափաքը և կարօտութիւնները Աստուծոյ կը յայտնէ աղաչանքով:

Ճէսիդա մեծ զարմացումով դարձեալ հարցուց,

— Աստուած ո՞վ է, պաշտօնեան ի՞նչ է, հոս եկող հարուստները բանի մը կարօտութիւն ունի՞ն. ևս կը կարծէի թէ անոնք ամէն բան ունին, և աւելին ունին:

— Տե՛ս, սա բեմ է. քարոզիչը հոս կենալով կը քարոզէ, և ժողովուրդն այս բազմոցներուն վրայ կը նստի և քարոզը մտիկ կ'ընէ, եթէ չմրավիեն. և սա երգեհոն է զոր երգի ժամանակ կը նուազեն: Ահա, ամէն բան ըսի: Հիմա զնա, վասն զի ժողովուրդը կու գայ, և քեզ հոս տեսնելով զիս կը յանդիմանէ. շուտով գնա, և ուրիշ անգամ մի զար հոս. լսեցի՞ր:

— Բայց, տէր իմ, ևս այդ բանները բնաւ չէի գիտեր: Զե՛մ կրնար արդեօք սա անկիւնը պահուիլ:

— Ոչ, ոչ, կարելի չէ, դուն ոչ գլխարկ ունիս և ոչ կօշիկ, քեզի պէս բիրտ աղջիկ մը ի՞նչ պիտի ընենք հոս: Ազօթքի ժամանակը մօտեցաւ, հիմա ժողովուրդը կու գայ, շուտ ըրէ, գնա: Ճէսիդա հասկցաւ թէ իրեն հնար չէր հոն կենալ, և դէպի դուռը գնաց: Դանիէլ բաւական ժամանակ նայեցաւ անոր ետեւէն որ չըլայ թէ դարձեալ ետ դառնայ: Ճէսիդա, երբ դրանց մօտ եկաւ և տեսաւ թէ ժողովուրդը կ'սկսէր գալ և

իրեն ձամբայ չկար դուրս ելլելու , դրան ետին պահուեցաւ : Ներս մտնողները շատ էին : Ճէսիգա դրան ետեւէն կը լսէր տիկիններուն մետաքսէ հանդերձներուն շրջիւնը և կը տեսնէր թաւշեայ թիկնոցներուն փայլուն երեւոյթը : Անդամ մը տիկնոջ մը թաւշեայ թիկնոցը ձեռքով շօշափեց , բայց տիկինը չիմացաւ :

Դանիէլ իր գործողին զբաղած էր , բայց սիրտը նեղացած և միտքն անհանդարտ էր աղջկան համար : Դուռը ելաւ , և փողոցը պարտող ոստիկաններուն հարցուց , «Այս ինչ կերպարանքով աղջիկ մը տեսա՞ք»

Բայց ճէսիգա դրան ետեւն էր : Երգեհոնը սկսաւ , և անոր ձայնն այնպէս աղջեց աղջկան սրտին որ նըստաւ և արցունք թափեց : Յետոյ մտիկ ըրաւ քարոզչին խօսքերը , բայց բան մը չհասկնալով խորհեցաւ դուրս ելլել , և երբ ոստիկանը որ եկեղեցին դուռը կը կենար՝ քիչ մը անդին գնաց , ճէսիգա ելաւ գնաց :

Ճամբան եկեղեցիի փառաւոր զարդերն ու ջահերուն լոյսը միտքը բերելով , կը կարծէր թէ դրախտէն արտաքսուեցաւ , և տիրութեամբ իր տունը գնաց :

•••••

### ԳԼՈՒԽ ԶՈՐՈՐՈԴ.

ՏԻՄԻԳԱ. ՀԵՇ-ԱՅԻՆ ԵՐԶԱԿԱԿՈՒԹԻՒՆ ԱՅ ՏԵՄՈՒ

Ճէսիգա սորվեցաւ թէ , եթէ եկեղեցին երթալով պահուի դրան ետին , ոչ ոք կ'արդիլէ զինք : Ուստի սովորութիւն ըրաւ ամէն կիրակի հոն երթալ և դրան ետեւ պահուիլ :

Սորվեցաւ թէ ե'րբ Դանիէլ կը զբաղէր գործով և ե'րբ ոստիկանը չէր գտնուեր հոն : Ուստի ամէն շաբթու կ'երթար և անձայն կը պահուէր դրան ետին : Երբեմն Դանիէլի նայելով և խորհելով թէ անտեղեակ

էր ան իր հոն գալուն՝ կը խնդար։ Վերջապէս ճանչցաւ քարողիչը և անոր երկու աղջիկները։ Երբ կը տեսնէր այս աղջիկներուն ներս մտնելով երթալ մաքէւր բազմոցներուն վրայ նստիլը, հառաչելով կ'ըսէր մտքէն, «Այս աղջիկներն ի՞նչ կընեն նստելով այն բազմոցներուն վրայ, ուր ինձի պէս աղտոտ աղջիկ մը կարող չէ երթալ նստիլ։»

Դանիէլ, որ ձէսիգայի եկեղեցին երթալը չէր գիտեր, հանդարտ որտով կը զբաղէր իր գործով։ Բայց երբ օրերը երկնցան և պաշտօնն սկսաւ ցորեկը կատարուիլ փոխանակ զիշերուան, ձէսիգայի դժուար եղաւ գաղտուկ մտնել և պահուիլ։ բայց տեղի չմնաց այս դժուարութեան, գաղտնիքն յայտնուեցաւ սա կերպով։ Օր մը, մինչ քարոզչին աղջիկները կանուխեկեկ եկեղեցի կ'երթային, ճամբան տեսան որ աղքատ աղջիկ մը պատոտած և աղտոտ հանդերձներով եկաւ մտաւ եկեղեցին, և զայս տեսնելով զարմացան։ Եւ երբ ներս մտան, տեսան որ աղջիկը դրան ետեւ նըստած էր։ Երբ իրենցմէ մին ըստ միւսին, «Կեցիր, երթամ կանչեմ Դանիէլը», » ձէսիգա ոտք ելլելով «Կ'աղաչեմ, զթացէք, » ըստաւ։ «Գիս վոնտել մի տաք, ես աղքատ աղջիկ մըն եմ, աշխարհիս վրայ այս տեղէն ուրիշ վայելելու բան մը չունիմ։ Շատ անդամ կը տեսնէի որ այն երկայնասաւակ անձին նետ կուգայիք այս եկեղեցին, բայց չէի կարծեր երբեք թէ վոնտել պիտի տաք զիս այս տեղէն։ Ես հոս կենալով մարդու մեաս չեմ տար, սակայն եթէ Դանիէլ իմանայ, ա'լ ինձի սուրճ չի տար։» Երբ այս լսեց քարոզչին մեծ աղջիկը, «Խեղճ աղջիկ, » ըստաւ, «մենք քեզի մեաս չենք տար։ կ'ուզենք հասկնալ միայն թէ ինչո՛ւ եկած և պահուած ես այս զրան ետին։» ձէսիգա պատուխանեց, «Ես նուագարան մտիկ ընել շատ կը սիրեմ, և կը փափաքիմ սորզիլ թէ ի՞նչ է Աստուած, ի՞նչ է

աղօթքը : Իրօք ձեզի պէս անձերու համար շինուած է այս տեղը . ես փափաքեցայ զո՞նէ աեգամ մը ներս մտնել և տեսնել թէ ի՞նչ կ'ընէք հոս :» Այն ատեն քարոզչին փոքր աղջիկն ըսաւ ձէսիզայի . «Եկուր , նստէ մեզի հետ :» Բայց անոր մեծ քոյրը , ձէսիզայի հանդերձին նայելով , չհածեցաւ : Միւսը , բանալով Աւետարանը զոր ունէր ձեռքք , քրոջը ցուցուց սա համարները . «Քանզի եթէ ձեր ժողովքին մէջ մարդ մը մտնելու ըլլայ որ ունենայ ոսկի մատանի և փառաւոր հանդերձներ , հոն աղքատ մըն աւ մտնելու ըլլայ աղտոտ հանդերձներով , և նայիք անոր վրայ որ փառաւոր հանդերձներ ունի , և ըսէք թէ Դուն հոս նստէ պատուով , և այն աղքատին ըսէք թէ Դուն հոդ ոտքի վրայ կայնէ , կամ թէ Եկուր նստէ պատուանդանիս քով , ձեր մէջ խտրութիւններ ընող և չար խորհուրդներու զատաւոր չէ՞ք ըլլար» (Յակ . Բ. 2-4) : Բայց մեծ քոյրը դարձեալ ըսաւ , «Հիմա ես չեմ գիտեր թէ ի՞նչ ընեմ . զիրքին հրամանը պարզ է . սակայն տեսնենք մեր հայրը կը հաճի՞ որ այսպէս ընենք : Նախ եկեղեցւոյ սպասաւորին հարցնենք :» ձէսիզա երբ լսեց զայս , «Կ'աղաչեմ . կ'աղաչեմ ,» ըսաւ , «Դանիէլի մի իմացնէք , ուրիշ անդամ չեմ գար . իրա՛ւ չեմ գար . զիս թող տուէք , իօսք կու տամ որ ա՛լ չեմ աշխատիր գիտնալ թէ Աստուած ի՞նչ է և աղօթքն ի՞նչ է :»

Այն ատեն մեծ աղջիկը քաղցրութեամբ ըսաւ անոր , «Եթէ Աստուծոյ վրայ աեղեկութիւն չունիս , մեր պարտքն է քեզի սորվեցնել . մեր հայրը քարոզիչ է , եթէ կ'ուզես , մեզի հետ ներս եկուր , և հարցնենք անոր թէ ի՞նչ ընելու ենք :»

— «Դանիէլ կը տեսնէ՞ զիս :»

— «Հօրմէս ուրիշ մարդ չկայ անոր սենեակին մէջ :»

Այն ատեն ձէսիզա ըսաւ , «Եթէ այդպէս է , չեմ

վախնար, կու գամ:» Եւ երեքը միասին քարոզչին սենեակը երթալով՝ դուռը զարկին, և երբ ներսէն «Հրամեցէք» ըստեցաւ, ներս մտան:

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵԲՈՐԴԻ

ԱՇՍԵԳԱ ԵՐԶԱԿԱԿՈԹԵԱՆ ԿԱ ՄՈՏՆԱՑ

Երբ օրիորդները սենեակ մտան, քարոզիչը կրակին քով նստած՝ գիրք մը կը կարդար: Մարմնով նիհար, բայց որատես և խոհուն մարդ էր: Ուշադրութեամբ ձէսիդայի նայեցաւ՝ անոր վիճակը քննելու համար, և որչափ նայեցաւ, այնչափ աւելի գութը շարժեցաւ:

Ձէսիգա քարոզչին կարեկցութեան նշաններէն քաջալերուեցաւ, և երբ քարոզիչն անոր ըստ, «Մօտեկուր, աղջիկս,» խոկոյն գնաց, և ձեռքերը կուրծքին վրայ կեցաւ:

- Անունդ ի՞նչ է:
- Ձէսիգա է, տէր իմ:
- Ի՞նչ գեղեցիկ անուն:

— Մայրս այս անունով կը խաղար թատրոնը. անոր համար այս անունը տրուեցաւ ինձի: Դուք քարոզիչ էք:

- Այո:
- Պաշտօնեա՞ն էք:
- Այո:
- Որո՞ւ պաշտօնեան էք:
- Աստուծոյ և մարդոց, նաև քու:

Ձէսիգա, սենեակին զարդարուն պատերուն, քարոզչին երկու աղջկան դեղեցիկ հանդերձներուն և իր ցնցուախներուն նայելով, որպէս թէ կը մսէր, իր պատուած հանդերձին օձիքը ու ժով մը իրարու վրայ բերաւ ժպտելով: Անոր ժպտելէն քարոզչին դութն աւելի

շարժեցաւ, այնպէս որ արցունք եկաւ աչքերէն։ Բայց  
ձէսիզա, յառաջ տանելով խօսքը, հարցուց, «Աստուած  
ո՞վ է։ Երբ մայրս ինծի անէծք կու տար, երբեմն կը  
յիշէր այդ անունը, բայց չեմ գիտեր թէ ի՞նչ ըսել  
կ'ուզէր։ Դուք գիտէ՞ք թէ Աստուած ո՞վ է։» Քարո-  
զիչը պատասխան պիտի տար, և ահա Դանիէլ սեն-  
եակը մտաւ։ Թէպէտ հանդարտ դէմքով ներս մտաւ,  
ձէսիզան տեսնելով պապանձեցաւ, երեսը դեղնեցաւ,  
և ապշած՝ մէյ մը քարոզչին նայեցաւ, մէյ մը ձէսի-  
զայի։ Քարոզիչը ձէսիզայի գառնալով ըսաւ։ «Աղջիկս,  
բեմին քով պարապ տեղ մը կայ, հոն նստէ։ Կթէ հան-  
դարտ նստիս և մտիկ ըներ, բաւական բան պիտի  
լսես Աստուծոյ վրայ։ Յետոյ Դանիէլի գառնալով ը-  
սաւ։ «Ոռ այս աղջիկը, և անոր տեղ մը ցուցուր բե-  
մին քով, հոն թող նստի։» Դանիէլ, իսկոյն քարոզչին  
հրամանին հնազանդելով, ձէսիզայի տեղ մը ցուցուց  
բեմին քով։ Ձէսիզա այն տեղէն կրնար հարուստ և  
գեղեցիկ հագուած տիկիններուն նայիլ։ Բայց երբ քա-  
րոզիչն սկսաւ պաշտօնը, իր ուշադրութիւնն անոր  
տուաւ։ Թէպէտ շատ քիչ բան կրցաւ հասկնալ, սա-  
կայն քարոզչին քաղցր ձայնը, և զութը որ անոր  
երեսին վրայ կը տեսնուէր, այնպէս հաճելի թուեցան  
իրեն որ Դանիէլի դժգոհութեան և բարկութեան հա-  
մար այլեւս հոգ չըրաւ, քանզի, ինչպէս ըսինք, բո-  
լոր ուշադրութիւնը տուաւ հասկնալու թէ քարոզիչն  
ի՞նչ է և Աստուած ի՞նչ է։

-••••-

### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱԼՍԻՎԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱԳԱԹԵՔ

Երբ պաշտօնն աւարտեցաւ, քարոզիչն իր աղջիկ-  
ներուն հետ, նաեւ ձէսիզան մէկտեղ առնելով, իր  
սենեակը գնաց։ Հոն քիչ մը նստելով հանգչելէ ետքը

սապէս ազօթեց . «Ով Տէր , սորվեցուր ինծի քու հօտիդ այս գառնուկները հովուել , օգնէ ինծի և զօրացուր զիս , որպէս զի կարենամ պարտականութիւններս կատարել : » Յետոյ աղջիկներն իր քով կայնեցնելով , «Որդեակներ , » ըսաւ , «զԱստուած ճանչնալ դիւրին չէ . գիտենք սակայն թէ Աստուած մեր Հայրն է , ինչպէս նաև քուկդ , ձէսիգա : Մեզ ամէնս աւելի կը սիրէ , կը հոգայ , կը խնամէ քան ես իմ զաւակներս : » Երբ զայս լսեց ձէսիգա , «Ո՞հ , ես հայր չունիմ , » ըսաւ : Քարոզիչն , յառաջ տանելով իր խօսքը , «Աստուած քու Հայրդ է , » ըսաւ , «և որովհետեւ ամենազէտ է , գիտէ մտքիդ խորհուրդները : Թէպէտ մենք մարմնի աչքով չենք տեսներ զայն , երբ ազօթք կը մատուցանենք իրեն , ինք կը լսէ մեր ձայնը : Նաև արտօնութիւն ունինք իրմէ մեր պիտոյքը խնդրելու : » Այն ատեն ձէսիգա , իր հին հանդերձներուն և բոպիկ ոտքերուն նայելով , «Արդեօք , » ըսաւ , «ինչպէս կը լսէ մաքուր հագուած գեղեցիկ տղոց ազօթքը , իմ ազօթքս ալ այնպէս կը լսէ՞ : » «Այս , » ըսաւ քարոզիչը , «հիմա անզամ , եթէ խնդրես ի՞նչ բանի որ կարօտ ես , կը լսէ : » Ձէսիգա աչքերը սենեակին չորս կողմը պտտցուց , որպէս թէ զԱստուած փնտռելով , ապա զոցեց զանոնք և սապէս ազօթեց . «Ով Աստուած , կը փափաքիմ քեզ ճանչնալ . եթէ կը հաճիս , տուր այն սուրճներուն փոխարէնը որ Դանիէլ ինծի տուաւ , » Քարոզիչը սրտին խորերէն , «Ամէն , » ըսաւ ձէսիգայի այս առաջին ազօթքին : Աղջիկներն ալ զարմանքով ձէսիգայի երեսը նայեցան :

### ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԴԺՈՒԱՐԻՆ ԽԵԶԻՔԵՆԵՐ

Դանիէլ պաշտօնէն ետքը պատեհութիւն չգտաւ ձէսիգայի բան մը ըսելու : Սակայն , քարոզչին հրա-



BUTTERWORTH & SWANSON

մանը չգիտնալով, միտքը դրաւ աղջկան խօսիւ պատուիրել որ ուրիշ անդամ եկեղեցի չգայ, սպառնալով ոստիկանին մատնել զայն եթէ գայ: Բայց երբ ձէսիգա հետեւեալ օր սրճարան եկաւ ըստ սովորութեան, Դանիէլ անոր բան մը չըսաւ: Աղջիկն սկսաւ սապէս խօսիլ.

— Տէր իմ, Աստուած սուրճին փոխարէնը տուա՞ւ:

— Ի՞նչ, ո՞վ, Աստուած փոխարէնը տուա՞ւ, ի՞նչ կ'ըսես: Ոչ, չտուաւ:

— Բայց մի վախնար, կու տայ. ես շատ անդամ խնդրեցի իրմէ. և քարողիչն ըսաւ թէ ինչ որ Աստուծմէ խնդրենք, կու տայ:

— Ձէսիգա, քարողչին ըսի՞ր որ ես սրճարան ունիմ:

— Ոչ, բայց կիրակի օրէն ի վեր շատ անդամ ըսի Աստուծոյ, և Աստուած պիտի տայ քեզի փոխարէնը:

— Ձէսիգա, դուն հլու աղջիկ ես, խօսքս մտիկ կ'ընես. մարդու բան չըսես որ ես սրճարան ունիմ: Վասն զի մեր եկեղեցիին ժողովուրդը հարուստ և պատուաւոր մարդիկ են, թերես սուրճ եփել և ծախելը ստորին և անարդ գործ համարին ու զիս պաշտօնէս հանեն:

— Եթէ այդպէս է, ինչո՞ւ կ'ընես այդ գործը:

— Կը տեսնե՞ս այս ստակները, ես այս գործով շատ ստակ կը շահիմ տարին:

— Բայզ ինչո՞ւ կ'ուզես ստակ շահիլ: Շահէդ Աստուծոյ կու տա՞ս: Դանիէլ դարձեալ խորին մտածութեան մէջ ինկաւ, և միտքէն սա հարցումներն ըրաւ. «Իրաւ, ինչո՞ւ ստակ շահիլ կը բաղձամ, ինչո՞ւ կ'աշխատիմ. մարդ չունիմ, սենեակս այնչափ ստակ ժողուած կը մնայ: Ի՞նչ օգուտ պիտի ընէ: Երբեք մարդու բան մը տուա՞ծ եմ: Աւելորդ սուրճէն միայն՝ քիչ մը բան տուի ձէսիգայի, և ան կ'աղօթէ որ փոխարէնը Աստուած ինծի տայ:» Այսպէս խորհնելով հանեց բէնի մը, որ իբր քսան փարա կ'ընէ, և ձէսիգայի

ափը դրաւ։ Խսկ ձէսիգա մերժեց՝ ըսելով, «Ոչ, ոչ, ես քեզմէ ստակ չեմ ուղեր. կ'ուղեմ որ Աստուած քու մարդասիրութեանդ փոխարէնը քեզի տայ։»

— Այս, կու տայ. Աստղուած հաշիւի օր մը սահմանած է, գիտեմ:

— Այդպէս է, Աստուած հաշիւի օր ունի: Երբ  
ես թատրոնը կը խաղայի, հաշիւի օրուան կը սպա-  
սէի, և երբ այն օրը գար, կ'ուրախանացի:

— Բայց կարծեմ թէ Աստուծոյ հաշիւի օրուան ուրախութեամբ սպասող չառ քիչ կայ:

— Բայց դուն այն օրուան կը սպասես ուրախութեամբ, այնպէս չէ՞ :

Դանիէլ . գիտնալով թէ այնպէս չէր , պատասխան չտուաւ : Մարդուն խիզճն արթնցաւ և զգաց որ հաշիսի այն մեծ օրը պիտի չկրնար ուրախ ըլլալ :

Երբ ձէսիգա կը մեկնէր, Դանիէլի ըսաւ. «Տէր  
իմ, եթէ կը հաճիս, վաղը կու դամ, և այս ստակով որ  
ինծի տուիր՝ սուրճ կը խմեմ յաճախորդի պէս։ Վըս-  
տահ եղիր որ դալ կիրակի սուրճի խօսք չեմ ըներ  
քարոզիչին։» Այս ըսաւ և ստակն առնելով գնաց ու-  
րախութեամբ։

## ԳԼՈՒԽ ՌԻԹԵՐՈՐԴ

ԱՆԱԿՐՈՅ, ՀԵԽԵ ՄԸ

Երբ ձէսիգա իր թաղն հասաւ, տեսաւ որ քարոզիչը բաղմութեան մէջ կը կենար: Խակոյն գնաց, բարեւ տոււաւ անոր: «Աղջիկս, քու տունդ պիտի գամ», ըսաւ քարոզիչը: Ձէսիգա անոր հետ գնաց, և ախոռի մը փլած սանդուխէն վեր հանելով հին սենեակ մը տարաւ զայն: Հոն աթոռ կամ նստարան չկար, այլ աղիւսներու վրայ զրուած տախտակ մը՝ նստելու համար: Քարոզիչը տախտակին վրայ նստաւ և ձէսիգա գետինը, և սկսաւ խօսիլ սագէս:

«Ճէսիգայ, ա՞յս է ճեր տունը :»

— Այո, տէր, հիմա հոս կը նստինք : Ասկէ առաջ երբ թատրոնը կը խաղայինք, աւելի աղէկ էր մեր բնակարանը : Եթէ մեծնամ և աղէկ խաղալ սորվիմ, թերեւս դարձեալ աղէկ տուն մը ունենանք :

— Աղջիկս, քեզ աղէկ դպրոց մը դնելու համար մօրմէդ հրաման առնելու եկայ : Ի՞նչ կը կարծես, մայրդ պիտի հաճի արգեօք :

— Զեմ կարծեր . մայրս չուզեր զրկել զիս, ոչ դպրոց և ոչ եկեղեցի : Կը կարծէ թէ դպրոց և եկեղեցի երթալը արգելք են թատրոնի խաղերն աղէկ սորվելու : Մայրս չի զիտեր որ ևս եկեղեցի կու գամ, ինչու որ կիրակի օրերը գինովցած կը պառկի . և ևս առիթ գտնելով եկեղեցի կու գամ : Այս խօսքերը մօրմէն գանգատելու համար չըսաւ, հապա ուզեց իրողութիւնը հասկցնել :


— Հիմա ի՞նչ կրնամ ընել քեզի համար, Ճէսիգա :

— Տէր իմ, բան մը չես կրնար ընել : Միայն եթէ թող տաս ինծի կիրակի օրերը եկեղեցիդ գալ, և Աստուծոյ վրայ տեղեկութիւն տաս ինծի, շատ շնորհակալ կ'ըլլամ : Եթէ քու աղջիկներուդ հանդերձներուն պէս մաքուր և գեղեցիկ հանդերձներ տաս ինծի, մայրս կ'առնէ զանոնք, կը ծախէ և օղիի կու տայ : Այո, բան մը չես կրնար ընել :

— Մայրդ ո՞ւր է :

— Խմելու գնաց, և քանի մը օր ետքը տուն կու գայ : Եթէ հոս ըլլայ, ճեզ մտիկ չըներ : Անցեալները մէկը եկաւ հոս անոր խրատ տալու . մայրս սանդուղէն վար քշեց մարդը : Թատրոնին մէջ մայրս «կոռուաբար» կ'անուանեն, և մէկը չի համարձակիր անոր բան մը ըսել :

Քարոզիչը, դարձեալ քիչ մը խորհելէ ետքը, ըսաւ, «Ճէսիգա, ո՞վ է այն մարդը զոր Դանիէլ կը կո-



չես:» Ճէսիգա վարանելով պատասխանեց. «Ճէր իմ, բարեկամ է, երբեմն սուրձ և հայ կու տայ ինձի: Հարկաւ դուք լոնտոնի բոլոր մարդիկը չէք ճանչնար:»

— Այս, չեմ ճանչնար, բայց այդ բարեկամը սըրճարան ունի, և գաւաթ մը սուրձի համար քանի՞ բէննի կ'առնէ:

— Մեծ գաւաթներու համար՝ մէկ բէննի, փոքրերու համար՝ կէս բէննի. շօթ ալ կրնայ առնուիլ մինչեւ կէս բէննիի:

— Աղէկ սուրձ և աղէկ շօթ, այնպէ՞ս է:

— Աղէկ, շատ աղէկ շօթ և սուրձ: Ճէսիգա, որպէս թէ շօթերուն համը գեռ բերանն էր, շրթունքը լզելով ըստ այս խօսքը:

Քարողիչն ըստ Ճէսիգայի. «Այսուհետեւ իմ հաշիւիս սուրձ և շօթ առ:» Բայց երբ Ճէսիգա չհաճեցաւ, «Ուրիմն, ը ըստ քարողիչը, ամեն կիրակի շիլին մը (տասներկու բէննի) կու տամ քեզի, և առաջին անգամ որ սրճարանը երթաս, սրճարանին տէրոջը տուր զայն:» Եւ խիստ նայուածքով մը հասկցուց թէ պիտի իմանար, եթէ Ճէսիգա սուրձի համար չտար այն սոտակը: Բայց յետոյ մեղմ և քաղցր նայուածքով մը ըստ:

— Ուրիշ բան կ'ուզե՞ս:

— Ոչ, տէր իմ, բան չեմ ուզեր, միայն Աստուծոյ վրայ տեղեկութիւն:

— Շատ աղէկ, Աստուծոյ վրայ հիմա քեզի սա միայն կ'ըսեմ: Եթէ քեզ տունս առնեմ և զաւակ ընեմ ինձի իմ աղջիկներուս պէս, նախ պէտք է որ լուալ տամ քեզ և մաքուր հանդերձներ հագցնեմ, այնպէս չէ: Արդ, Աստուծած կ'ուզէ մեղ երկինք առնել իրենքով, բայց մենք որ մեղքով անմաքուր ենք՝ ամենեւին արժանի չենք:

«Ուստի Աստուծած, որպէս զի մեղ մաքրէ մեղքէ, մեզի արդարութեան հանդերձ հագցնէ և այսպէս պատ-

բաստէ մեղ երկնային օթևաններուն, իր Որդին աշխարհ զրկեց: Ուստի երբ քան մը խնդրես Աստուծմէ, պէտք է որ Քրիստոս Յիսուսի անունովը խնդրես, քանդի Յիսուս է Աստուծոյ Որդին:»

Քարողիչն այս խօսքն ըսելէ ետե երբ երթալ ուղեց, ձէսիգա անոր հետ մինչեւ մեծ փողոցը գնաց, և քարողիչն «Աստուծ օրհնէ քեզ,» ըսելով կէս շիլին տուաւ անոր, և ձէսիգա դարձաւ իր տիսուր բնակարանը:

Հետեւալ առաւօտ ձէսիգա, Դանիէլի սրճարանը երթալով, իբրև յաճախորդ համարձակութեամբ հաց և սուրճ առաւ ստակով, և նախընթաց օրուան գէպքը պատմեց անոր: Դանիէլ տարակոյսներու մէջ մնաց, բայց կ'ըսէր միտքէն. «Եթէ եկեղեցիի հոգաբարձուներն իմանան թէ սրճարան ունիմ և ուղեն զիս պաշտօնէս հանել, զանոնք կը համոզեմ՝ սրճարանը թողուլ խոստանալով:» Այսպէս խորհելով փարատեց իր տագնապը:



### ԴԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՃԵՄԿԱՅ ԱՌԱՋԵ ԱՂՅԹՔԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ:

Այսպէս թշուառ ձէսիգա ամէն կիրակի իրիկուն եկեղեցի կ'երթար բոպիկ և առանց քօղի կամ գլխարկի: Բայց, ժողովատեղին մտնելէ առաջ, Դանիէլի սենեակը կ'երթար, և հոն կը հագնէր վերաբկուն զոր քարողչին աղջիկները տուած էին, և կը գնէր զըլիարկը զոր նոյնպէս անոնցմէ առած էր: Ապա կ'երթար կը նոտէր բեմին քով. քարողը և աղօթքը մտիկ կ'ընէր ուշադրութեամբ, և պաշտօնէն ետքը քարողիչն համառօտ խրատ մը և շիլին մը առնելով կը մեկնէր:

Քանի մը շաբաթ ետքը քարողիչն օր մը եռանդով

և փափաքով մտիկ ընող այս աղքատ աղջիկը չտեսաւ ժողովին մէջ։ Դանիէլ ալ, տեսնելով որ աղջիկն յաջորդ օրը սրճարան չեկաւ հաց և սուրճ առնելու, թէև հոգ ըրաւ, բայց բան մը ըստ ուրիշի, ոչ ալ ուղեց ձէսիգայի տունը հարցնել, այլ «Ինձի ի՞նչ փոյթ,» ըսելով՝ ջանաց իր խիղճն հանդարտեցնել, և տուն գնաց։

Գիշերն իր ստակն համրելով ուրախութեամբ տեսաւ որ աւելի քան հինգ հարիւր ոսկի ունէր, և հասկըցաւ թէ ստակն օր ըստ օրէ կ'աւելնար։ Այն շաբաթն այս կերպով անցաւ։ Երբ ձէսիգա յաջորդ կիրակին ալ չերեցաւ, թէ՛ քարոզիչը և թէ՛ Դանիէլ զարմացան։

Պաշտօնէն ետքը քարոզիչը սենեակ երթալով կը հանգչէր։ Դանիէլ դուռը զարկաւ, և երբ ներսէն հրաման տրուեցաւ, դուռը բանալով ներս մտաւ։ «Տէր իմ,» ըստ քարոզիչին, «աղքատ աղջիկը չեկաւ։ հոգ կ'ընեմ անոր համար։ կ'ուղեմ երթալ դտնել զանիկաւ, բայց տունը չեմ գիտեր։ Դուք կարծեմ գիտէք, քանզի անգամ մը գացիք հոն։» Քարոզիչն անոր հասկցուց թաղը և տունը ուր կը բնակէր ձէսիգա, և ըստաւ։ «Աղէկ կ'ընես, Դանիէլ, ես ալ կասկածի մէջ եմ։ Ուղեցի երթալ, սակայն այսօր գործերս շատ են, ժամանակ չունիմ։» «Ես կ'երթամ,» ըստ Դանիէլ և եկեղեցի իջնելով՝ կանթեղները մարեց, գործերը կարգի դրաւ, և քարոզչին ըսածին համեմատ զնաց ձէսիգայի թաղը։

Դանիէլ երթալու միջոցին մեծ անձկութեան մէջ էր ձէսիգայի համար, վասն զի վերջին անգամ շատ տժգոյն և նիհար տեսած էր զայն։ Զանաց այս խորակով միտքէն հանել, բայց չկրցաւ։

Երբ հասաւ ձէսիգայի թաղը, մութ փողոցներէ անցնելով մտաւ ախոռը, և սանդուխէն ելլելով կեցաւ սենեակին դրան առջեւ։ Ներսը մութ էր, ձայն չկար,

և ոչ ոք ըսաւ «Մտիր»:» Ուստի սկսաւ ըսել միտքէն, «Մտնեմ ներս թէ թողում երթամ»:» Մինչ այսպէս կը վարանէր, լսեց որ մէկը ներսը սա ազօթքը կ'ընէր, «Ով երկնաւոր Հայր, դուն ինձի մէկը դրկէ, Յիսուսի անուան և սիրոյն համար»:

Դանիէլ ձայն տուաւ գուրսէն ըսելով, «Ահա ե-կայ, ի՞նչ կ'ուզես»:» Եւ վառելով մոմի մը ծայրը զոր իրեն քով ունէր՝ ներս նայեցաւ և տեսաւ որ ձէսիգա գրեթէ մահուան մօտ, դեղնած, փոխանակ վերմակի հին կապերտ մը առած պառկած էր յարդի դէզի մը վրայ: Երբ ձէսիգա տեսաւ Դանիէլը, ժալտելով ըսաւ, «Աղ-նիւ Դանիէլ, զո՞ւն ես, Աստուած զրկեց քեզ»:» Դանիէլ նստաւ աղջկան յարդէ անկողնին քով, և անոր նիհար ձեռքերն իր ձեռաց մէջ առնելով ըսաւ, «Այս, Աստ-ուած զրկեց զիս»:

— Աստուած ի՞նչ ըսաւ քեզի, Դանիէլ, հար-ցուց ձէսիգա: «Աստուած»:» պատասխանեց Դանիէլ, «ըսաւ ինձի. Ով մեղաւոր, ես զրկեցի քեզի ողոր-մելի, աղքատ, անօդնական և անտէր աղջիկ մը որ անոր բարիք ընես: Բայց գուն աւելի սրբեցիր քու ստակներդ քան թէ այն տառապեալ աղջիկը և չու-զեցիր օգնել անոր: Եթէ այս դիշեր հոգիդ քեզմէ պահանջեմ, այն ստակները որ ժողվեցիր՝ որո՞ւ պիտի ըլլան:» Այս լսելով պապանձեցայ, քանզի տեսայ թէ Աստուած եկած էր ինձմէ հաշիւ պահանջել:»

— Դուն աղէկ մարդ չե՞ս:

— Ոչ, ես մեղաւոր եմ. միշտ կ'երթամ Աստու-ծոյ տունը, բայց ստակի համար. և եթէ համեստ և աշխատանէր եմ. իմ շահուս հտմար է: Հիմա Աստ-ուած, նայելով իմ սրտիս. կը կոչէ զիս Անմիտ, Յի-մար: Դուն, ձէսիգա, երկինքի համար լաւ պատ-րաստութիւն ունիս, իսկ ես ամենեւին չունիմ:

— Եթէ այդպէս է, ուրեմն ինչո՞ւ Աստուծոյ չես

աղաչեր որ Յիսուսի սիրոյն համար բարի մարդ ընէքեղ:

— Վասն զի չեմ կրնար. շատ անգամ կիրակի օրերը, երբ քարողիչն ալօթք կ'ընէ, ծունը կը դնեմ, որպէս թէ կ'աղօթեմ. բայց խորհուրդս միշտ աղօթքի եկող հարուստներուն երջանկութեան վրայ է: Ստակն այնչափ սիրած եմ որ թերեւս ուզէի աւելի քու մահղ տեսնել քան թէ քիչ մը ստակ ծախք ընել: Ոչ, ի՞նչ թշուառ մեղաւոր եմ ես:

— Զի՞ս գիտեր սա խօսքը որ քարողիչը կարդաց Սուրբ Գիրքէն. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչև իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենամ»»

— Ի՞նչպէս չեմ գիտեր. շատ անգամ լսած եմ, և լսելով լսելով սիրոս կարծրացած է: Երբ այդ խօսքն առաջին անդամ լսեցի, շատ սիրեցի, բայց հիմա բընաւ աղդեցութիւն չըներ ինձի:

Ճէսիդա երբ լսեց զայս, իր ձեռքերը բերաւ կուրծքին վրայ, աչքերը գոցեց, և տեսդին սաստկութենէն տոչորուած շրթունքով սա աղօթքն ըրաւ. «Ով Տէր, չնորհք ըրէ, Դանիէլի սիրաը կակուզուր Յիսուսի սիրոյն համար, Ամէն:»

Երբ զայս ըստաւ, բաւական ժամանակ երկուքն ալ լուռ կեցան: Յետոյ Դանիէլ հանեց վերարկուն, և երբ անով կը ծածկէր հիւանդ աղջիկը, յիշեց Սուրբ Գիրքին սա խօսքը. «Որովհետեւ այս իմ եղբայրներուս ամէնէն պղտիկներէն մէկուն ըրիք, ինձի ըրիք:» Այսպէս հիւանդ աղջկան խնամ տանելու առիթով, կակուզցաւ Դանիէլի սիրաը, և «Աստուած, ուզրմէ ինձի մեղաւորիս,» ըսելով սիրով գարձաւ իր Փրկչին Յիսուսի:



## ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

### ՄԱՀՈՒԱՆ ՇՈՒՔԸ

Դանիէլ այն գիշերն հիւանդին քով մնաց, և առաւօտուն սրճարան չերթալով, երբ դրացիներէն ստուգեց թէ ձէսիգայի մայրը փախած էր, կառք մը բռնեց և իր սենեակը տարաւ հիւանդը: Հոն բժիշկ մը կանչելով պատուիրեց անոր ամէն միջոց գործածել աղքատ աղջիկն առողջացնելու համար, յետոյ հետեւեալ նամակը գրեց քարոզչին.

Տէր իմ,

Եթէ ժամանակ ունիք բնակարանո դալու, հոս կը գտնէք ձէսիգան: Մահացու տենդէ մը բռնուած գանելով զայն՝ տունս բերի: Հիմա հիւանդովն զբաղած եմ, և չեմ կրնար ձեզի գալ: Ողջ լերուք.

Դանիէլ Սանտինկ:

Քարոզիչն, այս նամակն առնելով, թողուց ամէն գործ և Դանիէլի տունը գնաց, երբ դռնէն ներս մըտաւ, նախ տեսաւ ձէսիգայի նիհար և տենդին սաստկութենէն դեղնած երեսը: Իսկ Դանիէլ աղջկան քով նստած էր և իր հաշիւները կը քննէր: Ձէսիգա, երբ իմացաւ քարոզչին գալը, կարմրելով, «Բարի եկէք, տէր իմ» ըստ, «Հայր Աստուած տուաւ ինչ որ խնդրեցի, միայն Դանիէլի սուրճին և շօթերուն փոխարէնը չտուաւ:» Դանիէլ իսկոյն պատասխանեց: «Ոչ, փոխարէնը հազար անգաւ տուաւ, քանի մը գաւաթսուրճի փոխարէն հոգիս պարզեց ինծի: Շատ տարիներէ ի վեր պաշտօնի և աղօթքի կը յաճախէի և ամէն մարդ զիս հաւատացեալ կը կարծէր, բայց ես


կորուսած էի հոգւով :» Քարողիչը զայս լսելով ըստ . «Ես ալ քեզ հաւատացեալ կը կարծէի :» Դանիէլ պատասխանեց : «Այս , այնպէս է նաև ուրիշ խօսք մը պիտի ըսեմ . Տասը տարի է որ սրձարան ունիմ , և որովհետեւ մեր ժողովուրդն հարուստ և պատուաւոր է , չուզեցի յայտնել այս գործը , որ չըլլայ թէ եկեղեցւոյ սպասաւորութենէն հանուիմ : Ես կուտայի նաև ձէսիգայի սուրճ և հաց :»

«Դանիէլ , ամէնալու բան մը չէ այս ,» ըստ քառողիչը :


— «Այս , տէր իմ , զիտեմ . բայց երբ այս աղջիկը սուրճ խմելու համար սրձարանս կու գար . շատ անգամ սա հարցումները կ'ընէր . «Դանիէլ , կը սիրե՞ս Յիսուսը . ուրա՞խ ես որ Աստուած քու հայրդ է : Դանիէլ , որչափ յառաջ կ'երթանք , այնչափ կը մօտենանք արքայութեան , այնպէս չէ . բոլոր ստակդ կու տա՞ս Աստուծոյ :» Այս վերջին հարցումը զիս շատ անհանգիստ կ'ընէր : Ահա , մինչ հոս նստած էի հիւանդինք , քով , գարձեալ ստակս կը համրէի . ունիմ իբր հինգ հարիւր ոսկի :

«Աղօթք ըրի Աստուծոյ , ըսելով . «Այս աղջիկը մի առներ , բոլոր այս ստակը քեզի կը նուիրեմ :» ձէսիգա . Դանիէլի այս խօսքը լսելով , քիչ մը ոզի առաւ , և տկար ձայնով աղօթեց սապես . «Ով Հայր որ երկինքն ես , խնդրեցի քեզմէ որ զիս երկնային օթեւանդ ընդունիս , բայց եթէ աշխարհի վրայ մնալով կրնամ Դանիէլի օգուտ մը ընել . չնորհէ ինծի ժամանակ մը ես մնալ հոս , Յիսուսի անուան համար : Ամէն :» Աղօթքէն ետքը երկուքն ալ կարող չեղան խօսիլ , և ատեն մը լուս կեցան իրենց աշքերը գոց : Յետոյ քարողիչն աչքը վերցնելով՝ ձէսիգայի երեսը նայեցաւ , և տեսաւ որ նեղութեան և տագնանապի նշաններն անցած էին և գէմքին վրայ հանդար-

տութիւն կար : Գիտնալով թէ մահուան մօտ այսպէս կ'ըլլայ երբեմն , քարոզիչը կարծեց թէ մահուան քուն էր այն : Բայց բռնելով հիւանդին ձեռքերը՝ տեսաւ թէ տաք էին և բազկերակը հանդարա կը զարնէր : Ուստի Դանիէլի գարձաւ և ըսաւ . «Աղջիկը մեռած չէ , հապա կը քնանայ ,» Եւ արդարեւ ձէսիգա այն ժամանակէն սկսաւ արագ արագ առողջութիւն գտնել : Եւ Դանիէլ ամենայն շնորհակալութեամբ զայն իրեն որդեգիր ըրաւ : Երբ ձէսիգա առողջացաւ , սկսաւ իր ծերունի հօրն օդնել այլեւայլ գործերու մէջ : Բայց անոր ամէնէն սիրելի գործն եղաւ աւլել եկեղեցին , մաքրել բեմին փոշիները և երեկոյեան կանթեզները վառել : Կիրակնօրեայ պաշտամունքին կը գտնուէր միշտ , և երբ պաշտօնեան կենաց խօսքը կը քարոզէր , սա մեծ ուրախութիւնն ունէր որ , եթէ ոչ ուրիշներ , գէթ ինք (ձէսիգա) ուշադրութեամբ մտիկ կ'ընէր : Քարոզիչը կը զգար թէ խօսքը զոր կը քարոզէր՝ «կենդանութեան հոտ էր զէպի կեանք ,» և շատ անդամ կը յիշէր ձէսիգայի առաջին գալուստը և առաջին ազօթքը :







İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM0548\***

255.07.02.01.06.00/

